

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՀԱՅՀՈՅՈՂՆԵՐՈՒՄ ՄԱՍԻՆ

Մեծ եւ անբաւելի մեղք է հայինյանքը եւ աւելի չար՝ քան Ադամէն մինչեւ այսօր բոլոր հերանածները, որոնք ժողովով նզովուած են: Մեծագոյն հերանածը հայինյանքն է, որ բոլոր մոռցուած մեղքերն ու չարիները յիշել կու տայ Աստուծոյ, հրեշտակներուն ու սուրբերուն. կը դուզացէ Աստուծոյ արարածները եւ գարշելի ու զազիր հոտով կը լեցնէ երկիրը:

Հայինյողները կը փակեն Աստուծոյ ողորմութեան դուռը, թոյլ չեն տար Արարիչին, որ ողորմած աչքով իր արարածները տեսնել եւ կ'արգիլեն սուրբերուն, որ բարեխօս ըլլան աշխարհին համար: Այս ձեւով քրիստոնէական անունը եւ քրիստոնէութեան աննատ խորհուրդը կը նախատուի եւ ասոր համար է, որ Քրիստոս բաւարար: «Ան որ Ս. Հոգիին հայինէ, պիտի չներուի անոր ո՛չ այս աշխարհին եւ ո՛չ հանդերձեալին մեջ (Մտք. 12.33):

Քրիստոս այս աշխարհին մեջ ոչ ո՞ի իշխանութիւն տուած է ներելու հայինյողին: Միւս աշխարհին մեջ եւս ոչ ո՞ւ կը համարձակի բարեխօսել՝ ո՛չ հրեշտակները ո՛չ ալ սուրբերը, այլ՝ աշխարհաստեղծ բերնի անէծներով դեմքերուն հետ գեհենի անշիշանելի հուրը կ'երթայ: Իսկ այս կեանքին մեջ այնքան ատեն, որ կենդանի է, բոլոր սուրբերը կը նզովեն այնպիսին: Աստուծածախօս եւ մեծ մարգարէն Մովսէս նզոված է հայինյողը՝ իր ամբողջ ունեցածով եւ նիստ ու կաղով: Նոյնը ըրած են բոլոր սուրբերը: Արդարեւ, ո՞վ չի նզովեր Աստուծոյ Աքոնին հայինյողն ու զայն դուզացնողը:

ՀԱՅՑԵՒՅՑ

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,

P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 - facebook-h-էջ-յերազ-թեր

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ ԿՌՈՋԵՍ...

ԵԹԵ ԱՍԻՐԱԻՈՒԱԾ ԵՍ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՏՏՈՒԵ ԿԱՐԴԱ Սաղմոս 26

Արդարութիւն ըրէ ինձի, Տէ՛ր, անմեղ եմ ես. մեզի՝ Տիրոջ վստահեցայ, եւ պիտի չասանիմ: Փորձէ զիս Տէ՛ր, քննէ զիս. քու կրակովի փորձէ ցամկուրիմները սրտիս եւ խորհուրդները մտքիս: Որովհետեւ ողորմութիւնդ չհանեցի ես միտքես, եւ ապրեցայ՝ միշտ քեզի հաւատարիմ մնալով: Անպէտ մարդոց ընկերութիւն չըրի՝ ես, կեղծաւրին հետ բնաւ գործ չունեցայ: Աստեցի միշտ հաւաքոյքը շարերուն ամբարիշտին հետ բարեկամ ես չեղայ: Որպէս նշան անմեղութեան՝ պիտի լուամ ձեռքերս, եւ սեղանին շուրջ դառնալով՝ սպասարկեմ քեզի, Տէ՛ր: Գոհուրեան ե՞րգ պիտի երգեմ ես քեզի, եւ քու բոլոր սրանչելի գործերդ պիտի քունեմ: Տէ՛ր, կը սիրեմ վայելչութիւնը տանը, այս յարկին, ուր քու փառքը կը բնակի: Ամբարիշտներուն եւ ոճրագործին հետը միասին զիս ալ կորուստի մի՛ դատապարտեր: Անօրէնութեան լի են անոնց գործերը, եւ անոնց ձեռքերը՝ կաշառքով լեցուն: Բայց անմեղ եմ ես, ողորմէ ինձի եւ փրկէ զիս, Տէ՛ր: Անսայթաք պահէ իմ քայլերս միշտ, եւ ես խմբուած ժողովրդիդ հետ՝ քեզ պիտի օրինաբանեմ:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ վիճուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՁՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՐ ԻՆ ԸԱՒԻՆԵՐՈՒՄ ԼՀՅԱ
(Աղ. 119.105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 6 ՍԵՊԵՏԵՄԲՐ 2020

ԹԻՒ 36

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒՃԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 13.1-11: Բ.. Կր. 7.4-16

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԵՏԱՐԱՆԸ ԸՆՄԱՐԿՈՒՄ 7.31-37

ՅԻՍՈՒԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՄԱՐԿՈՒՄ 7.31-37

Յիսուս Տիրոսի սահմաններէն մեկնելով, Սիրոնի վրայով անցաւ Դեկապոլիսի սահմաններէն եւ եկաւ Գալիլիայի ծովեզերքը: Եւ ահա իրեն քերին խոլ եւ համր մարդ մը խնդրելով, որ ձեռքը դնէ անոր վրայ: Յիսուս զայն ամբոխէն հեռու մէկ կողմ տարաւ, մատները անոր ականջներուն մէջ դրաւ, յետոյ քքեց եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, հառաչեց եւ ըսաւ. «Եփիաբա՛», որ կը նշանակէ «քացուէ»: Նոյն վայրկեանին անոր ականջները քացուեցան, եւ լեզուն քացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ: Յետոյ Յիսուս պատուիրեց ժողովուրդին, որ ունէ մէկուն չըսեն: Սակայն ինչքան ալ ան կը պատուիրէր, որ չտարածեն, անոնք առաւել չափով կը պատմէին այս մասին: Մարդիկ աւելի եւս կը զարմանային եւ կ'ըսէին. «Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ. տեսէր, խոլերուն իսկ լսել կու տայ եւ համբերում՝ խօսիլ»:

«Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ. տեսէր, խոլերուն իսկ լսել կու տայ եւ համբերում խօսիլ» Այս վկայութիւնը արձանագրուեցաւ ժողովուրդին կողմէ, որոնք ներկայ եղան եւ տեսան այն մեծ հրաշքը, որ կատարեց Յիսուս այն խոլ եւ համր մարդուն, որ իր սիրելիներու կողմէ առաջնորդուեցաւ Յիսուսի մօտ: Յիսուս ուրախութեամբ ընդառաջեց եւ կատարեց հրաշքը: Խոլը եւ համրը կը խորհրդանշէ այն բոլոր մարդիկը, որոնք ականջ ունին չեն լսեր եւ բերան ունին եւ չեն խօսիր: Բոլորս ալ հրաւիրուած ենք վկայելու Յիսուսի մասին: Վկայ դառնալու համար նախ պէտք է Յիսուսի հասնի եւ ապա իր անունը տարածել ամբողջ ժողովուրդին: Յիսուս կը հրաւիրէ մեզի իր տուած շնորհները օգտագործելու իր փառքին համար:

ՍԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՋԵՐ ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՆԱԱՎԱԿՆԵՐ

Սհաւասիկ Բարելոնի վերաբերող Տիրոջ պատգամը, որ յայտնուեցաւ Ամոսի որդի Եսայիին. Պատերազմի դրօշ կանգնեցէք մերկ լերան վրայ, ո՞վ իսրայէլացիներ, բարձրադադակ ողունեցէք եկող բանակները, մի՛ վախնաք, ձեռնով նշան ըրէք անոնց, որոնք կու գան Բարելոնի վրայ:

Ինձի համար նուիրագործուած պատերազմիկներն են անոնք, որոնք են Բարելոնի դէմ պիտի դրկեմ որպէս զայն նուանելով բարկութիւնս յագեցնեն եւ ինձի հետ ուրախանան:

Լսեցէ՛ լեռներուն վրայ բազմութիւններու աղմուկը: Զայնը բազմաթիւ ազգերու, ճայնը բազմաթիւ հաւաքուած ժողովուրդներու: Երկնաւոր Զօրքերու Տէրը ի՛ն հրամայեց սպառազինուած այս ժողովուրդներուն, որ գան հեռու երկիրներէն, հեռաւոր հորիզոններէ. եւ իր պատերազմիկներուն հետ Տէրը ին կու գայ ամբողջ աշխարհը աւերելու:

Ողբացէ՛, որովհետեւ մօտ է Տիրոջ օրը, արդէն կը հասնի Աստուծոյ հարուածը:

Այդ պատճառով ալ բոլորին ձեռները պիտի թուլնան, մարդոց սիրտերը վախով պիտի լցուին, իշխանները խոռվի պիտի մատնուին, ծննդական կնոջ մը պէս երկունեց պիտի բոլորին իշխանը բոլորի մեջ կամ ամենի մասնակի պիտի մատնուին:

Արդարեւ ահա կու գայ Տիրոջ օրը, երբ Տէրը անողով զայրոյթով ու սաստիկ բարկութեամբ անապատի պիտի վերածէ աշխարհը եւ անկէ բնաշինչ պիտի ընէ մեղաւորները:



ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
7.4-16

Մեծ վստահութիւն ունիմ ձեր վրայ. մեծապէս հպարտ եմ ձեզմով: Մեր կրած բոլոր նեղութեանց մէջ ինքինքն միխթարուած եւ մեծապէս ուրախ կը զգամ, որովհետեւ Մակեդոնիա հասնելէն ի վեր երբեք հանգիստ չունեցանք, այլ ամէն կողմէ նեղութիւն: Մէկ կողմէ արտաքին թշնամութիւնները կը նեղէին մեզ, իսկ ներքնապէս՝ մեր վախը: Բայց Աստուծ, որ կը միխթարէ սրտաբեկները, Տիտոսի գալովը մեզ միխթարեց:

Ուրախացուցիչը միայն Տիտոսի գալը չէր: Ուրախացանք մանաւանդ, երբ լսեցինք թէ ի՛նչպէս գոհ մնացած էր ձեզմէ: Մեզի պատմեց, թէ անձկութեամբ կը սպասէի ինձի, թէ ո՛րքան ցաւած է՛ պատահածին համար եւ թէ ի՛նչպէս կապուած է՛ ինձի: Զէք կրնար երեւակայել որքան ուրախ եմ: Ճիշդ է, որ նամակովս ֆիշ մը վշտացուցի ձեզ, բայց իմամ չե՛մ զոշար ըրածիս, թէեւ գրելես վերջ զոշացեր էի, քանի կը տեսնեմ, թէ այդ նամակս միայն կարն ժամանակ մը վշտացուցեր է ձեզի: Ուրախ եմ իմամ, ո՛չ թէ ձեզ ցաւցուցած ըլլալուս համար, այլ՝ որովհետեւ այդ տրտմութիւնը պատճառ եղաւ որ ապաշխարէք: Եւ որովհետեւ ձեր տրտմութիւնը Աստուծոյ գործին ծառայեց, ես պէտք չունիմ այլեւս իստութեամբ գալու ձեզի:

ՇԱՐՈՒԽԱԿԵԼ ԱՍՏՈՒՄՆԱՇՈՒԽԵՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՆԻԿԻՈՅ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ

318 ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ

Եկեղեցական հայրերու գումարած առաջին տիեզերական ժողովի յիշատակը, տօնի ձեւով կը կատարուի Հայոց Եկեղեցւոյ մէջ, ինչպէս միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակը (Կ. Պոլիս եւ Եփեսոս):

Նիկիոյ ժողովը գումարուեցաւ 325 թուականին, 318 հայրապետներու մասնակցութեամբ, կոստանդիանոս կայսեր արտօնութեամբ: Ժողովը գումարուելու շարժառիթը Աղեքսանդրիացի երէց Արիոսի հետաքրքրութիւնն էր: Արիոս կը ժխտէր Յիսուսի հաւասարութիւնը Հօր՝ Աստուծոյ հետ եւ չէր ընդուներ Յիսուսի Աստուծ ըլլալը: Հսու Արիոսին Յիսուսը պարզապէս գերմարդկային արարած մըն էր:

Նիկիոյ ժողովին Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորիչի կողմէն կը մասնակցէր Արիոսակէս եպիսկոպոսը: Քննուեցաւ Արիոսի մոլար ու հերետիկոսական շարժումը, դատապարտուեցաւ անոր վարդապետութիւնը, հաստատուեցաւ ճշմարիտ դաւանանքը եւ կազմուեցաւ «Հաւատոյ հանգանակ»ը:

Նիկիոյ հանգանակը աւելի ճշխացած ձեւով կ'ըսուի Եկեղեցւոյ մէջ՝ պատարագի ընթացքին, աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք: Հաւատամքի բովանդակած կէտերը իւրաքանչիւր քրիստոնեայի համար քրիստոնէական հաւատքի եւ դաւանութեան բանաձեւերն են:

Հաւատամքը կը բովանդակէ Աստուծոյ, Որդւոյ, Ս. Հոգւոյ, Եկեղեցւոյ, Մկրտութեան, մեղքի, մեռելներու յատրութեան, յաւիտենական կեանքի, վերջին դատաստանի, երկինքի թագաւորութեան եւ հոգիներու անձական մասին քրիստոնեաներու ունեցած հաւատքն ու դաւանութիւնը:

Նիկիոյ, ինչպէս նաեւ միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակի օրը Եկեղեցւոյ մէջ կ'երգը կը հայրապետներու նույիրուած շարականներ, ուր անոնց ներբողը հիւսուած է որպէս հաւատքի հիմքը հաստատողներ:

Ս. ՀՈԳԻՈՎ ԶՈՐԱՎԱԼՈՒ ԱՂՈԹՔ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէր Տէր: Լս՛ մեկ, ո՛վ Աստուծուած, մեր Փրկիչը. ականջդ մեկի խոնարհեցուր, որպէսպի զուր տեղ չյօգնինք, այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածապաշտութեան պտուղ նկատէ՛: Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ քու ողորմութեամբդ հատուցանէ՛ մեկի, առատապէս: Քու ամենապօր աջիդ հովանիին տակ ծածկէ՛ մեկ, եւ Սուրբ հոգիիդ գորութեամբը զօրացու'ր մեկ, ո՛վ Տէր: Աչքի բիբի պէս պահէ՛ մեկի եւ քու բարերարութիւնդ ցոյց տուր մեկի, որպէսպի քու սուրբ անունդ գովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնչենաւոր փառաբանութեամբ քու փառաբանի բարձունքներուն մեջ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: